Հայաստանի կառավարությունը ընդունեց այս պայմանները, որոնք նոյ. 7-ին իրագործուեցին: Հայկական զօրքերի մի մասը քաշուեց դէպի Ջաջուռ, միւս մասը՝ դէպի Աղին: Բայց յաջորդ օրը, նոյ. 8-ին, Քեմալիստ կաբարեքիրը, յանուն իր կառավարութեան ներկայացրեց հետեւեալ պահանջները.

«Զինադադարի պայմանները. — Առ այժմ 24 ժամուայ ընթացքում Ալեքսանդրապոլում, բոլորովին գործածելի վիճակի մէջ 2000 արդահարուած հրացան, սարքով և կենդանիներով միասին 20 հատ ծանր և 40 հատ արդահարուած դնդացիր, երեք մարտկոց թնդանոթ, 4000 ջոր, 1000 սնուցիկ հրացանային ռազմամթերք, 6000 թնդանօթի ռումբ, 2 շոգեշարժ մեքենայ և 50 վագոն պիտի յանձնուի մեզ: Կանոնաւոր և անկանոն հայկական զինուորական ուժերը Արփաչայի ընթացք—Ալագեազ կայարան—Կիրմիզլի—Կոլչան, Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արևելք պիտի քաշուեն. այս գծից արևմուտք գտնուող երկաթուղագիծը չքանդուած և անվնաս պիտի թողնուի:

Երկրորդ՝ առ առաւելն 3 օրուայ ընթացքում դարձեալ հայկական կանոնաւոր և անկանոն զինուած ուժերը Սուրմալու—Արաքս կայարան—Կեզիլչի—Արէթ—Ալագեազ լերան լանջը —Տանգերմաղ—Նոյո—Միխայլովկա—լոռիքենդ—Շէրմուտ Եալանդաղ գծից արևելք պիտի քաշուեն:

Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի միջև երկաթուղագծի վրա ամէն տեսակ ռազմական պիտոյքների փոխադրութիւնը պիտի կանգ առնի: Այս փոխադրութիւնները սուղելու համար Սանահին կայարանը և Ղարաքիլիսէ մէկ-մէկ յանձնախմբեր պիտի ուղարկուեն, և հայկական կառավարութիւնը վերոյիշեալ յանձնախմբերի անձեռնմխելիութիւնը և Ալեքսանդրապոլի շրջանում երանց արևելեան ճակատի հրամանատարութեան հետ կանոնաւորապէս և ապահովապէս կապ ունենալը պիտի երաշխաւորի:

Չորրորդ՝ մինչ զինադադարի երրորդ օրը երեկոյեան, երկու կողմի պատուիրակները հաշտութեան բանակցութիւններ սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գտնուեն և այս ժամանակի ընթացքում եթէ առաջին և երկրորդ պայմանների բովանդակութիւնը իրագործուած է՝ իսկոյն հաշտութեան բանակցութիւնները պիտի սկսուեն:

Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զօրամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում յիշուած Արփաչայ հոսանք—Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արևելեան կողմը և միւս շրջաններում երեսնց գտնուած գծից առաջ չպիտի անցնեն:

Վեցերորդ՝ զինադադարի կնքումից անմիջապէս յետոյ երկու կողմից թշնամական գործողութիւններին վերջ պիտի տրուի:

Սոյն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնուող հայկական առաջաւոր մասերին յանձնելու ժամից գործադրութեան մէջ են մտնում և պայմանաժամը, ի վերջոյ, եթէ կարիք զգայի, երկարաձգելու պայմանով, եօթ օր է: № 2378»:

Հայաստանի կառավարութիւնը ամենամեծագոյն կերպով բողոքեց այս պահանջների դէմ, նկատելով այդ, երբև զինադադարի խախտում և որոշեց